ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-7-5-Ա

ք. Երևան 06.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի դեկտեմբերի 6-ի նիստում քննարկեց 2017 թվականի նոյեմբերի 23-ին «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լիլիթ Ակոպովայի կողմից ներկայացված դիմումը «JOYCO» պատկերային ապրանքային նշանը 01.03.2017թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու վերաբերյալ՝ դաս 30. հրուշակեղեն և քաղցրավենիք ապրանքների համար:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում կան բավարար տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ «JOYCO» պատկերային ապրանքային նշանը օգտագործման արդյունքում 01.03.2017 թվականի դրությամբ լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ապրանքների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է ապրանքային նշանը: Բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ն հանդիսանում է տվյալ ոլորտում խոշոր արտադրող, հաստատել է իր կայուն տեղը հայկական շուկայում և ունի արտադրատեսակների լայն ընտրանի: Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն ներկայացված ապրանքային նշանը կարող է ճանաչվել հանրահայտ ՀՀ-ում «հրուշակեղեն և քաղցրավենիք» ապրանքների համար:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության

աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը «JOYCO» պատկերային ապրանքային նշանը 01.03.2017թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 30-րդ դասի «հրուշակեղեն և քաղցրավենիք» ապրանքների համար հանրահայտ ճանաչելու վերաբերյալ ամբողջովին բավարարել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ